Պարսկերենը բոլորի համար

(խմբակի ղեկավար՝ Մ. Արզումանյան)

Միջին դպրոց՝ 5 - 9 դասարաններ

Ժամաքանակը՝ 34 ժամ

Բացատրագիր

Խմբակի առաջնային նպատակն է՝ զարգացնել աշակերտների բանավոր հաղորդակցման կարողությունները՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները: Դպրոցում պարսկերենի խմբակի ուսումնառությունն ընդգրկում է 8 և 9 երրորդ դասարանների աշակերտներին, նպտակն է՝ սովորողներին ուսուցանել խոսակցական պարսկերեն, որն իրականացվում է բանավոր խոսքի միջոցով: Ուսուցումն ընթանում է խաղերի, երգերի, լսողական վարժությունների միջոցով:

Պարսկերենի հնչյունային համակարգը
- ձայնավոր և բաղաձայն հնչյուններ.
- երկար և կարճ ձայնավորներ

-Նախադասության հնչերանգը (պատմողական, հարցական, հրամայական, բացականչական)
-Պարսկերենի այբուբենը,
տառեր,
տառակապակցություններ

Գոյական

Թիվ
– եզակի / հոգնակի.
Անձ ցույց տվող/ առարկա ցույց տվող
բացառություններ
Հատուկ/հասարակ
-իզաֆեթ

Ածական

Գույն, չափ, ձև, որակ ցույց տվող ածականներ համեմատության աստիճանները

Դերանուն

Նախնական ծանոթություն պարսկերենի դերանվանական համակարգի հետ՝
Անձնական դերանուն
Հարցական դերանուն
Ցուցական դերանուն

Թվական
Թվականը պարսկերենում
քանակական բացարձակ թվական/1-10/

11-20 թվականների կազմությունը(միվորը՝ նախադաս, տասնավորը՝ ետադաս)

Բայ
Բայը որպես խոսքի մաս պարսկերենում
Բայի եղանակներն ու ժամանակները

Տեքստերի տիպերը
- Տեքստեր՝ ունկնդրելու և խոսելու համար
- կարճ նկարագրություններ
-կարճ տեղեկատվական տեքստեր
- երգեր, բանաստեղծություններ,
- կարճ երկխոսություններ
-ձայնագրություններ-պատրաստի խոսքային նմուշներ

Նպատակները՝

- Ներկայացնել թեմային առնչվող բառապաշարը, տրված քերականական նյութը
- Զնավորել և զարգացնել նախնական հաղորդակցական կարողությունները՝ խոսքային գործունեության բոլոր տեսակներում
- Զարգացնել թեմաների շրջանակներում պարզ և կարճ հարցերին հիմնավորված պատասխանելու կարողությունը,
- Նպաստել պարսկերեն բանավոր խոսքի տարրական հմտությունների ձևավորմանը երկխոսություններ վարելու, իր, ընկերների, ծնողների մասին ոչ ծավալուն տեղեկություններ հաղորդելու նպատակով:

Խնդիրները՝

- Ստեղծել միջավայր պարսկերեն սովորելու համար , սովորողին հոգեբանորեն նախապատրաստել նոր լեզվական միջավայրին և նրա մեջ դրական վերաբերմունք ձևավորել օտար լեզվի նկատմամբ՝ հենվելով մայրենի և արդեն ուսուցանվող օտար լեզուներից ունեցած նրա փորձառության վրա:

- Աշխատանքներ տանել նաև երկրի (Իրան) մասին նախնական տեղեկությունների հաղորդմանը

-Ստեղծել նախադրյալներ միջմշակութային հաղորդակցման համար՝ հաշվի առնելով աշակերտների պահանջմունքները, հետաքրքրությունները, տարիքային և անհատական առանձնահատկությունները:

- Հաճախակի կազմակերպել մշակութային, գրական միջոցառումներ

Խմբակի անդամները կկարողանան՝

ա/ տիրապետել խոսքային գործունեության բոլոր տեսակներին (ունկնդրել, խոսել, ընթերցել և գրել) տրված թեմաների և հաղորդակցության հիմնական ոլորտների շրջանակներում,

բ/ **Հաղորդակցվել** հիմնական ոլորտներում – կենցաղային (առօրյա հաղորդակցական վիճակներ)

գ/ **գործածել** նոր յուրացրած բառապաշարը՝ խոսելիս և գրելիս, մտքերը արտահայտելու նպատակով. – **ընկալել և հասկանալ** բառերն ու բառակապակցությունները ունկնդրելիս և ընթերցելիս՝ տեղեկատվությունը ստանալու նպատակով:

դ/ **լսելով** հասկանալ ծանոթ լեզվական նյութի հիման վրա կազմված կարճ և ոչ բարդ տեքստի հիմնական բովանդակությունը

Օգտագործվող դասագիրք և լրացուցիչ գրականություն

Այբբենարան պարսից լեզվի (Նվարդ Առաքելյան, Ժենյա Ասատրան, Հասմիկ Բիանջյան, Հասմիկ Գալստյան, Հերմինե Մուրադյան) Երևան 2006թ.
Պարսից լեզվի քերականություն(Գ. Մ. Նալբանդյան) Երևան 1997թ.
Amuzeshe khandane farsi be qelase avvaliha (Mohammad Farrokhi) Tehran 1388

Amuzeshe alefba ba sheer(Rudabe Hamzei)

فارسي اول دبستان

(Farsie avvale dabestan)

(Fereydun Aqbari, Ferdousi Hajiyan, Mostafa Rahman Dust, Shahin Neemat Zade) Tehran 1394(2015թ.)